ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2019թ. թիվ 126-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԵՎ ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1515-Ն որոշման 4-րդ հավելվածը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների երթևեկող աշակերտներ ունեցող դպրոցների տնօրենների մասնակցությամբ կազմակերպված քննարկումները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշման 4-րդ հավելվածով հաստատված «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» ծրագրով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանին հատկացված 2992.0 հազ. դրամը /երկու միլիոն ինը հարյուր իննսուներկու հազար/ բաշխել՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով սահմանված ֆինանսական միջոցների բաշխումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մարտի 27
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. մարտի 27-ի
թիվ 126-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական
ուսումնական հաստատությունների երթևեկող աշակերտների
համար նախատեսված գումարների բաշխման

Հ/հ	Դպրոցի անվանումը	Ընդամենը /աշակերտ/	I-IX դասարան	X-XII դասարան	Երթուղի /համայնք-դպրոց/	Վճարման ենթակա գումար /հազ.դրամ/
			աշակերտների թիվը	աշակերտների թիվը		
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1	Արջուտի միջնակարգ դպրոց	5	4	1	Արջուտ կայարան	75
2	Լերմոնտովոյի միջնակարգ դպրոց	21	20	1	Անտառաշեն	317
		2	2		Թեժ Լեռ	30
3	Ձորագետի հիմնական դպրոց	4	4		Առանձնացված թաղամաս /Թումանյան կայարան/	60
4	Ագարակի միջնակարգ դպրոց	1		1	Կողես	15
5	Գարգառի Վ.Բալայանի անվան միջնակարգ դպրոց	2		2	Պուշկինո	30
6	Ախթալայի N2 միջնակարգ դպրոց	1		1	Նեղոց	15
7	Շամլուղի միջնակարգ դպրոց	13	12	1	Բենդիկ	196
8	Արևածագի միջնակարգ դպրոց	9		9	Ծաթեր	136
9	Լորուտի միջնակարգ դպրոց	4		4	Աթան	121
		5		5	Շամուտ	75
10	Օձունի Հովհաննես Օձնեցու անվան N 1 միջնակարգ դպրոց	5		5	Մղարթ	151
		3		3	Ծաթեր	91
		3		3	Այգեհատ	45
11	Օձունի N 2 միջնակարգ դպրոց	1		1	Այգեհատ	15
		11	9	2	Ամոջ	166
		5		5	Հագվի	75
12	Արծնու միջնակարգ դպրոց	14	13	1	Ապավեն	211
13	Ձյունաշողի միջնակարգ դպրոց	2	2		Պաղաղբյուր	45
14	Ձորամուտի միջնակարգ դպրոց	13	12	1	Գոգավան	196
15	Մեդովկայի միջնակարգ դպրոց	11	10	1	Կրուգլայա Շիշկա	166
16	Սարատովկայի միջնակարգ դպրոց	20	14	6	Նովոսելցովո	304
		8	7	1	Գետավան	183

17	Բլագոդարնոյեի հիմնական դպրոց	18	18		Մեղվահովիտ	274
	Ընդամենը	**181**	**127**	**54**		**2992**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ